Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-25/18 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի օգոստոսի 21-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-25/18 ծածկագրով գնման պայմանագրում 2026 թվականի մայիսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 պայմանագրի վերջնաժամկետի փոփոխություն

Փոփոխության առաջացման պատճառ N 2 ֆինանսական միջոցների նախատեսում

Փոփոխության նկարագրություն N 1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում, համաձայնագրի կնքում

Փոփոխության նկարագրություն N 2 Վճարման ժամանակացույցի հաստատում, համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, ՀՀ կառավարության 2026թվականի փետրվարի 12-ի թիվ 142-Ա որոշում, Պայմանագրի 8.5, 8.16 կետեր

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

Կապան համայնքի ճանապարհների և բնակելի շենքերի բակային հատվածների վերակառուցման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման

2025թ. օգոստոսի 21-ին կնքված N <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-25/18>> ծածկագրով

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Կապան «22» մայիս 2026թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գրիգորի Փարսյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համաձայն Հայաստանի Հանրապետության 2026թվականի փետրվարի 12-ի N 142-Ա որոշման, հիմք ընդունելով 21.08.2025թ. կնքված <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-25/18>> ծածկագրով պայմանագրի 8.5 և 8.16 կետերը և, հաշվի առնելով ֆինանսական միջոցների նախատեսումը, կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար սուբվենցիայի մասնաբաժնի ընդհանուր գումարը սահմանել 73147943 (յոթանասուներեք միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Հաստատել սույն Համաձայնագրի վճարման ժամանակացույցը սուբվենցիայի մասնաբաժնի 73147943 (յոթանասուներեք միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ գումարով՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 Հավելվածի, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 42417144(քառասուներկու միլիոն չորս հարյուր տասնյոթ հազար մեկ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 30730799(երեսուն միլիոն յոթ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր իննսունինը) ՀՀ դրամ:

1.3 Փոփոխել Պայմանագրի գործողության վերջնաժամետը՝ նոր վերջնաժամկետ սահմանելով 2026 թվականի հունիսի 30-ը:

1.4 Պայմանագրի Օրացուցային գրաֆիկը/Հավելված 2/ և Պայմանագրի Համաձայնագիր N 1-ի վճարման ժամանակացույցը/Հավելված 1/՝ ընդունել համաձայն սույն Համաձայնագր 1.3 կետով սահմանված փոփոխության:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով սահմանված դրույթները, կողմերի ստանձնած իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը, համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան, Չարենցի 1	ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա/5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ԲԲԸ Կապան մ/6
ՀՀ 900312512040 համայնք	ՀՀ 2470800045720000
ՀՀ 900312000491 սուբվենցիա	ՀՎՀՀ 09400653
ՀՎՀՀ 09426088	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«21» օգոստոս 2025թ. կնքված
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-25/18>> ծածկագրով պայմանագրի
«22» մայիս 2026թ. Կնքված N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187-512	Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի վերակառուցում և ասֆալտապատում					42417144	42417144	42417144	42417144	42417144	42417144	42417144	42417144	42417144
	45231187-513	Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 22, թիվ 23, թիվ 24, թիվ 25 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի վերակառուցում և ասֆալտապատում					30730799	30730799	30730799	30730799	30730799	30730799	30730799	30730799	30730799

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 համայնք
ՀՀ 900312000491 սուբվենցիա
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա/5
Արդշինբանկ ԲԲԸ Կապան մ/ճ
ՀՀ 2470800045720000
ՀՎՀՀ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ